



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. հուլիսին /վերլուծություն/

2005թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9559 գործարքներ, որոնց քանակը 2004թ. հուլիսի համեմատ աճել է 12.6%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ նվազել՝ 4.7%-ով:

2005թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3442 օտարման գործարքների 88.2%-ը կազմել են առուվաճառքները, 11.2%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 43.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.8%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. հուլիսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2004թ. հուլիսի համեմատ նվազել է 2.6%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ 3.2%-ով: 2005թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 8.2%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ աճել՝ 6.0%-ով:

2005թ. հուլիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. հուլիսին համարժեք է 443.0դրամին/

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հուլիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		հուլիս 2004թ.	հուլիս 2005թ.	հունիս 2005թ.
Կենտրոն	155100.0-429700.0	244950.0	288000.0	279300.0
Արաբկիր	110800.0-288000.0	193100.0	232900.0	233500.0
Քանաքեռ-Զեյթուն	88600.0-221500.0	118400.0	144700.0	142700.0
Նոր-Նորք	88600.0-177200.0	101100.0	138600.0	134700.0
Ավան	79700.0-155100.0	96700.0	123500.0	122900.0
Էրեբունի	70900.0-177200.0	94200.0	121800.0	118000.0
Շենգավիթ	70900.0-199400.0	110900.0	147100.0	141800.0
Դավթաշեն	88600.0-199400.0	120800.0	146600.0	142200.0
Աջափնյակ	88600.0-199400.0	109800.0	141800.0	138700.0
Մալաթիա-Սեբաստիա	88600.0-199400.0	108600.0	134600.0	133800.0
Նուբարաշեն	44300.0-88600.0	41900.0	75750.0	73600.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	44300.0-429700.0	121800.0	154100.0	151000.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հուլիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.1%:

2005թ. հուլիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 371 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. հուլիսի համեմատ նվազել է 21.9%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ 2.4%-ով:

2005թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հուլիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			հուլիս 2004թ.	հուլիս 2005թ.	հունիս 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	17700.0-66500.0	33300.0	46000.0	45300.0
	Այարան	8900.0-26600.0	18550.0	20700.0	21000.0
	Թալին	8900.0-28800.0	16800.0	20200.0	20500.0
Արարատ	Արտաշատ	17700.0-42100.0	29400.0	34300.0	34800.0
	Սասիս	17700.0-66500.0	31700.0	45400.0	41100.0
	Վեդի	13300.0-35400.0	22400.0	27400.0	20500.0
	Արարատ	13300.0-44300.0	21000.0	31000.0	26100.0
Արմավիր	Վաղարշապատ	22200.0-79700.0	48000.0	69000.0	69200.0
	Արմավիր	17700.0-53200.0	30900.0	40800.0	41100.0
	Մեծամոր	8900.0-31000.0	17200.0	21800.0	22000.0
Գեղարքունիք	Սևան	8900.0-33200.0	18300.0	26900.0	23100.0
	Գավառ	8900.0-28800.0	17700.0	18600.0	18800.0
	Սարտունի	8900.0-44300.0	18000.0	31200.0	22900.0
	Վարդենիս	4400.0-28800.0	9300.0	17100.0	11000.0
	Ճամբարակ	5800.0-19900.0	9400.0	9200.0	9200.0
Լոռի	Վանաձոր	13300.0-44300.0	32800.0	37300.0	36000.0
	Ստեփանավան	8900.0-28800.0	19100.0	20900.0	21100.0
	Սպիտակ	13300.0-39900.0	19400.0	22800.0	23100.0
	Ալավերդի	6600.0-22200.0	13600.0	16400.0	16500.0
	Տաշիր	6600.0-31000.0	13300.0	19000.0	19200.0
	Թումանյան	4000.0-8900.0	4950.0	5100.0	5200.0
	Շամլուղ	2200.0-8200.0	2800.0	2700.0	2700.0
	Ախթալա	6600.0-15700.0	10300.0	10100.0	10200.0
Կոտայք	Արովյան	19900.0-79700.0	49300.0	71900.0	67400.0
	Նոր Հաճն	22200.0-66500.0	33400.0	50900.0	45700.0
	Բյուրեղավան	13300.0-44300.0	21700.0	32600.0	33000.0
	Եղվարդ	15500.0-53200.0	25000.0	43700.0	40100.0
	Հրազդան	13300.0-44300.0	20100.0	26900.0	27300.0
	Ծաղկաձոր	17700.0-66500.0	43500.0	51700.0	52400.0
	Չարենցավան	13300.0-44300.0	20400.0	32900.0	29400.0
Շիրակ	Գյումրի	17700.0-53200.0	38100.0	39300.0	39200.0
	Արթիկ	8900.0-35400.0	16500.0	22900.0	20249.9
	Սարալիկ	8000.0-31000.0	15000.0	20300.0	15800.0
Սյունիք	Գորիս	11100.0-53200.0	18900.0	39900.0	34800.0
	Կապան	8900.0-35400.0	17800.0	29100.0	26800.0
	Սիսիան	8900.0-35400.0	18200.0	23700.0	24000.0
	Մեղրի	8000.0-35400.0	13400.0	19800.0	20100.0
	Ագարակ	8000.0-35400.0	13300.0	16900.0	17100.0
	Քաջարան	5800.0-22200.0	10500.0	15800.0	12300.0
	Դաստակերտ	4400.0-11100.0	6600.0	6200.0	6300.0
Վայոց Ձոր	Վայք	13300.0-35400.0	19700.0	25300.0	23300.0
	Եղեգնաձոր	17700.0-44300.0	25900.0	37900.0	35200.0
	Ջերմուկ	17700.0-66500.0	22977.2	41400.0	38500.0
Տավուշ	Դիլիջան	13300.0-39900.0	21975.9	30000.0	30300.0
	Իջևան	17700.0-44300.0	26100.0	34100.0	34000.0
	Բերդ	11100.0-31000.0	16000.0	24300.0	24600.0
	Նոյեմբերյան	6600.0-22200.0	14600.0	13300.0	12500.0

2005թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 5.8%:

2005թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 399 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 116, մյուս մարզերում միասին վերցրած՝ 283: 2004թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 16.5%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 5.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 20.3%-ով: 2005թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 3.9%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել՝ 15.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 15.0%-ով:

2005թ. հուլիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հուլիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		հուլիս 2004թ.	հուլիս 2005թ.	հունիս 2005թ.
Կենտրոն	113000.0-886000.0	249200	310000	279300.0
Արաբկիր	88600.0-443000.0	201600	250000	233500.0
Քանաքեռ-Զեյթուն	66500.0-265800.0	118900	150100	142700.0
Նորք-Մարաշ	88600.0-443000.0	177800	174500	134700.0
Ավան	84200.0-354400.0	99200	129500	122900.0
Էրեբունի	66500.0-221500.0	97100	125300	118000.0
Շենգավիթ	66500.0-199400.0	111200	145800	141800.0
Դավթաշեն	88600.0-398700.0	121600	152500	142200.0
Աջափնյակ	55400.0-265800.0	111800	148100	138700.0
Սալաթիա-Մեքաստիա	62000.0-398700.0	110800	140300	133800.0
Նուբարաշեն	35400.0-88600.0	42700	81200	73600.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>35400.0-886000.0</b>	<b>131100.0</b>	<b>164300.0</b>	<b>151000.0</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հուլիսին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 1.7%:

2005թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 250.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հուլիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			հուլիս 2004թ.	հուլիս 2005թ.	հունիս 2005թ.

Արագածոտն	Աշտարակ	26600.0-80000.0	45000.0	47600.0	47400.0
	Ապարան	11100.0-31400.0	20500.0	22100.0	21800.0
	Թալին	8900.0-31400.0	17600.0	22100.0	21900.0
Արարատ	Արտաշատ	22200.0-49400.0	32700.0	36100.0	36100.0
	Մասիս	22200.0-58400.0	33400.0	46700.0	42100.0
	Վեդի	13300.0-40400.0	24500.0	28700.0	22800.0
	Արարատ	13300.0-42600.0	21600.0	31900.0	27500.0
Արմավիր	Վաղարշապատ	35400.0-80000.0	48500.0	69900.0	70200.0
	Արմավիր	22200.0-53900.0	31300.0	42400.0	42100.0
Գեղարքունիք	Սևան	8900.0-40400.0	19200.0	28500.0	24000.0
	Գավառ	8900.0-35900.0	21000.0	19800.0	19800.0
	Մարտունի	11100.0-40400.0	19300.0	32400.0	23900.0
	Վարդենիս	6600.0-31400.0	11200.0	18200.0	12500.0
	Ճամբարակ	6600.0-22500.0	10700.0	10800.0	10900.0
Լոռի	Վանաձոր	22200.0-49400.0	36800.0	38500.0	37500.0
	Ստեփանավան	15500.0-35900.0	19900.0	26200.0	26400.0
	Սպիտակ	15500.0-33700.0	20000.0	24000.0	24000.0
	Այվերդի	6600.0-31400.0	14300.0	17800.0	17600.0
	Տաշիր	6600.0-31400.0	13700.0	20200.0	20500.0
	Թումանյան	4400.0-15700.0	5400.0	6500.0	6500.0
	Շամլուղ	2200.0-15700.0	3700.0	4000.0	4100.0
	Ախթալա	8900.0-22500.0	11200.0	11600.0	11200.0
Կոտայք	Արուսյան	31000.0-85300.0	49700.0	73500.0	68400.0
	Նոր Հաճն	17700.0-62900.0	33800.0	52200.0	46600.0
	Բյուրեղավան	15500.0-44900.0	22100.0	34100.0	33900.0
	Եղվարդ	22200.0-58400.0	25400.0	44743.0	41400.0
	Հրազդան	15500.0-40400.0	21400.0	28927.9	28900.0
	Ծաղկաձոր	31000.0-67400.0	46300.0	54134.6	54900.0
	Չարենցավան	15500.0-44900.0	20800.0	34022.4	30400.0
Շիրակ	Գյումրի	26600.0-53900.0	48300.0	42395.1	43000.0
	Արթիկ	8900.0-40400.0	17100.0	24276.4	21200.0
	Սարայիկ	11100.0-35900.0	15400.0	21574.1	16700.0
Սյունիք	Գորիս	17700.0-53900.0	19800.0	41021.8	35700.0
	Կապան	13300.0-40400.0	18500.0	30699.9	27700.0
	Սիսիան	8900.0-40400.0	18600.0	25029.5	25100.0
	Մեղրի	11100.0-35900.0	14900.0	20865.3	21000.0
	Ազարակ	6600.0-35900.0	14900.0	17941.5	18100.0
	Դաստակերտ	4400.0-20200.0	7300.0	7486.7	7500.0
Վայոց Ձոր	Վայք	8900.0-35900.0	20200.0	26801.5	24200.0
	Եղեգնաձոր	17700.0-53900.0	26300.0	38984.0	36500.0
	Ջերմուկ	11100.0-40400.0	23300.0	28573.5	28600.0
Տավուշ	Դիլիջան	13300.0-44900.0	22300.0	32339.0	32800.0
	Իջևան	17700.0-44900.0	26600.0	35262.8	34500.0
	Բերդ	8900.0-40400.0	16500.0	25251.0	25500.0
	Նոյեմբերյան	8900.0-31400.0	16200.0	13821.6	14000.0

2005թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 5.6%:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հուլիսին հանրապետությունում օտարվել են 1643.82 հա /այդ թվում՝ 51.57 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1526.44 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1632.14 հա հողերի

/այդ թվում՝ 50.95 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1516.50 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 11.06 հա /այդ թվում՝ 0.03 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 9.93 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 0.62 հա /այդ թվում՝ 0.58 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1053.71 հա, որից 1050.38 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. հուլիսին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	37	36.90	16	4.40	0	0.00	90	8.43	8	1.22
Արագածոտն	2	39.40	0	0.00	3	0.03	59	37.88	38	4.41	0	0.00
Արարատ	90	241.33	29	3.64	13	1.12	49	15.80	52	5.14	1	0.004
Արմավիր	97	831.90	0	0.00	1	0.01	48	218.48	35	3.31	0	0.00
Գեղարքունիք	1	3.10	4	0.38	2	0.01	7	2.07	9	1.22	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	15	12.06	7	0.78	1	0.002
Կոտայք	18	22.16	0	0.00	9	2.95	108	35.40	111	35.15	7	4.53
Շիրակ	6	1.32	3	0.17	2	0.02	10	8.40	14	0.56	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	2	1.47	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	2	20.00	0	0.00	1	0.10	7	7.00	3	0.36	0	0.00
Տավուշ	9	13.13	7	0.53	0	0.00	11	5.59	3	0.15	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>225</b>	<b>1172.34</b>	<b>80</b>	<b>41.62</b>	<b>47</b>	<b>8.64</b>	<b>316</b>	<b>344.15</b>	<b>362</b>	<b>59.51</b>	<b>18</b>	<b>5.77</b>

2005թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են 1050 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ հուլիսին՝ 999/ այդ թվում 541-ը՝ գյուղատնտեսական նշանակության /409/, 507-ը՝ բնակավայրերի /588/, 2-ը՝ արդյունաբերական օբյեկտների /2/:

2005թ. հուլիսին հողերի առուվաճառքներից 335 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ հուլիսին՝ 262/, այդ թվում 39-ը՝ /37.84 հա/ Երևանում /98/, իսկ 296-ը՝ /1181.27 հա/ մյուս մարզերում /164/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 225 միավորը /1172.35 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2004թ հուլիսին՝ 49/, 72-ը՝ /40.40 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /190/, 37-ը՝ /6.34 հա/ հասարակական կառուցապատման /22/ և 1-ը՝ /0.03 հա/ արդյունաբերական օբյեկտների /1/ հողեր:

2005թ. հուլիսին հանրապետությունում արձանագրված 541 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 225-ն իրականացվել են աճուրդների և 2-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեք /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեք /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	2	39.40	110.8	110.8	110.8	44	14.88	354.4	4430.0	1838.5
Ապարան						10	4.47	88.6	753.1	288.0
Թային						3	13.20	88.6	744.2	239.2
Ծաղկահովիտ						2	5.32	75.3	930.3	124.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	1.40	108.5	369.9	239.2	15	4.41	327.8	5316.0	1054.3
Մասիս	26	37.71	33.2	1931.5	341.1	19	4.53	177.2	3898.4	1231.5
Վեդի	62	202.22	19.9	1484.1	203.8	15	6.87	199.4	3189.6	731.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	21	53.12	8.9	930.3	316.7	22	14.90	288.0	2060.0	651.2
Բաղրամյան	65	756.81	19.9	128.5	59.8	8	195.64	88.6	664.5	372.1
Վաղարշապատ	11	21.97	17.7	1103.1	564.8	18	7.95	434.1	6202.0	1120.8
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								186.1	487.3	288.0
Ճամբարակ	1	3.10	522.7	522.7	522.7			44.3	531.6	110.8
Մարտունի								44.3	1772.0	403.1
Սևան						1	0.10	44.3	443.0	170.6
Վարդենիս						6	1.97	26.6	522.7	159.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						6	3.36	159.5	2436.5	336.7
Գուգարք						2	1.18	221.5	2658.0	828.4
Սպիտակ						1	0.15	221.5	1461.9	460.7
Ստեփանավան						3	1.36	79.7	1772.0	252.5
Տաշիր						3	6.02	44.3	177.2	159.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան						61	16.08	265.8	8860.0	2622.6
Եղվարդ						42	16.63	168.3	4430.0	1807.4
Հրազդան	18	22.16	128.5	345.5	206.0	4	2.31	110.8	2658.0	602.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	1	0.02	1650.2	1650.2	1650.2	6	5.33	243.7	1661.3	336.7
Ամասիա								35.4	232.6	88.6
Անի						1	0.14	106.3	354.4	172.8
Աշոցք								26.6	93.0	88.6
Արթիկ	5	1.30	819.6	1049.9	881.6	3	2.94	62.0	1063.2	137.3
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	1.36	88.6	708.8	265.8
Կապան								53.2	886.0	199.4
Մեղրի								177.2	1878.3	398.7
Միսիան						1	0.12	39.9	664.5	168.3

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	20.00	201.6	201.6	201.6	4	0.83	115.2	1772.0	1129.7
Վայք						2	6.02	53.2	1506.2	443.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	1.30	44.3	886.0	301.2
Իջևան	9	13.13	316.7	507.2	341.1	2	0.36	234.8	1772.0	722.1
Նոյեմբերյան						8	3.93	44.3	3694.6	358.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. հուլիսին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են 315 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքի գործարքներ, որից 43-ը՝ աճուրդային վաճառքներ և 2-ը՝ դատարանի վճռով գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						34	36600.0	110.8	3544.0	1838.5
Ապարան						3	5450.0	110.8	620.2	155.1
Թալին								44.3	354.4	66.5
Ծաղկահովիտ								44.3	354.4	62.0
Արարատի մարզ										
Արտաշատ	16	21596.0	37.7	256.9	155.1	9	11850.0	132.9	2658.0	691.1
Մասիս	4	4000.0	252.5	252.5	252.5	34	29320.0	132.9	8860.0	841.7
Վեդի	9	10800.0	254.7	261.4	259.2	8	9251.0	110.8	974.6	487.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						9	12268.0	132.9	2215.0	770.8
Բաղրամյան						1	1200.0	79.7	265.8	101.9
Վաղարշապատ						25	19679.0	132.9	4430.0	1098.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	860.0	132.9	886.0	292.4
Ճամբարակ	1	1000.0	108.5	108.5	108.5			44.3	132.9	70.9
Մարտունի	3	2800.0	112.5	115.2	113.4	1	1010.0	88.6	265.8	137.3
Սևան								88.6	886.0	115.2
Վարդենիս						7	10352.0	44.3	132.9	57.6
Լոռու մարզ										
Այվերդի								66.5	265.8	93.0
Գուգարք						5	3527.0	66.5	2303.6	434.1
Սպիտակ						2	4250.0	62.0	398.7	97.5
Ստեփանավան								44.3	265.8	70.9
Տաշիր								44.3	132.9	59.8
Կոտայքի մարզ										
Աբովյան						48	41609.0	132.9	4430.0	1377.7
Եղվարդ						54	300883.0	132.9	4430.0	1479.6
Հրազդան						8	8104.0	132.9	3544.0	930.3



Շիրակի մարզ										
Ախուրյան						13	5475.4	110.8	1506.2	254.7
Ամասիա								44.3	132.9	59.8
Անի								66.5	177.2	82.0
Աշոցք								39.9	132.9	53.2
Արթիկ	3	1680.0	68.7	899.3	471.8	1	80.0	66.5	908.2	110.8
Սյունիքի մարզ										
Գորիս								66.5	531.6	190.5
Կապան								66.5	620.2	181.6
Մեղրի								66.5	398.7	101.9
Սիսիան								66.5	398.7	115.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	2820.0	66.5	974.6	194.9
Վայք						1	730.0	75.3	620.2	99.7
Տավուշի մարզ										
Բերդ								44.3	620.2	75.3
Իջևան	7	5250.0	219.3	219.3	219.3	3	1470.0	66.5	974.6	305.7
Նոյեմբերյան								44.3	620.2	93.0

2005թ. հուլիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 7 գործարքներ /որից 5-ը՝ գյուղատնտեսական նշանակության/ 1.58 հա մակերեսով, ընդ որում 4-ը՝ Արարատի /1.28 հա/, 1-ը՝ Շիրակի /0.14 հա / և 2-ը՝ Սյունիքի /0.16 հա / մարզերում:

2005թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 881 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 21.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն նվազել է 2.9%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ 11.4%-ով:

2005թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 26 բնակարանների, 15 անհատական բնակելի տների, 212 հասարակական, 15 արտադրական նշանակության օբյեկտների և 613 միավոր հողեր:

2005թ. հուլիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 41 վարձակալության գործարքների քանակը 2004թ. հուլիսի համեմատ նվազել է 62.4%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ աճել՝ 10.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հուլիսին հանրապետությունում վարձակալվել են 2367.32 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 9.01 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 2278.36 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 9.35 հա բնակավայրերի, 54.20 հա արդյունաբերական օբյեկտների, 10.14 հա հատուկ պահպանվող տարածքների, 0.50 հա էներգետիկայի օբյեկտների, 0.15 հա անտառային, 4.11 հա տրանսպորտի օբյեկտների, 1.52 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 901.21 հա, որից 900.92 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 22.41 հա Տավուշի մարզում, որից 17.97 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 972.10 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. հուլիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	68	159.94
Արարատ	3	299.00	16	119.86
Արմավիր	0	0.00	7	16.99
Գեղարքունիք	4	29.50	7	29.75
Լոռի	0	0.00	25	83.44
Կոտայք	1	50.00	40	36.47
Շիրակ	4	493.00	86	407.92
Սյունիք	2	25.00	13	248.81
Վայոց Ձոր	2	75.60	13	185.10
Տավուշ	0	0.00	8	17.97
<b>Ընդամենը</b>	<b>16</b>	<b>972.10</b>	<b>283</b>	<b>1306.25</b>

2005թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 662 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. հուլիսի համեմատ աճել է 5.8%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ նվազել 4.7% ով: Ընդ որում գրավադրման գործարքների 45.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /52.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /22.1%/, առանձնատների /15.4%/ և հողերի /4.2%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 391 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. հուլիսի համեմատ աճել է 0.3%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ նվազել՝ 5.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 17.58 հա /այդ թվում 0.59 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 15.92 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Սյունիքի մարզում՝ 10.47 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2005թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 39 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5%: 2004թ. հուլիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 76.9%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ 64.3%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 10.9%:

2005թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1932 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. հուլիսի համեմատ աճել է 39.3%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ նվազել՝ 1.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 20.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /60.4%/: